« Հաստատում եմ »
Ուսումնավարժության ղեկավար
Գորիս համայնքի ղեկավար

Առուշ Առուշանյան
«03» մարտ 2021թ

# ՊԼԱՆ

Սյունիքի մարզի Գորիս համայնքի Որոտան գյուղում
շտաբային ուսումնավարժության անցկացման

**Ուսումնավարժության թեման՝**
« Բնակչության տարահանման և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը խոշոր անտառային հրդեհների դեպքում»:

**Ուսումնավարժության նպատակները՝**

1. Ստուգել Գորիս համայնքապետարանի և Որոտան գյուղի ղեկավար կազմի, կազմավորումների հրամանատարների ունակություններն անտառային հրդեհների կանխարգելման դեմ բնակչության հետ պրոֆիլակտիկական միջոցառումների կազմակերպման ժամանակ:
2. Կատարելագործել Գորիսի համայնքապետարանի և Որոտան գյուղի ղեկավար կազմի, կազմավորումների հրամանատարների ունակությունները անտառային հրդեհների կանխարգելման դեմ բնակչության հետ պրոֆիլակտիկական միջոցառումների իրականացման աշխատանքներում:

**Ուսումնավարժությունում ընդգրկվում են՝**
Գորիսի համայնքապետարանի և Որոտան գյուղի ղեկավար կազմը և կազմավորումների հրամանատարները:
**Ուսումնավարժության անցկացման ժամկետը՝**
2021թ մարտի 25-ին
**Ուսումնավարժության անցկացման վայրը՝**
Գորիս համայնք, Որոտան գյուղ
**Ուսումնավարժության անցկացման կարգը ըստ փուլերի՝**
Ուսումնավարժությունը անց է կացվելու 2 փուլով 6 ժամ ընդհանուր տևողությամբ:

**I փուլ՝** Բնակչության տարահանման և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը խոշոր անտառային հրդեհների դեպքում

փուլի տևողությունը օպերատիվ՝ 4 ժամ

աստղաբաշխական՝ ժամը 9:00- ից մինչև 13:00

**II փուլ՝** Բնակչության պաշտպանության և անտառային հրդեհների հետևանքների վերացման միջոցառումների իրականացում:

փուլի տևողությունը օպերատիվ՝ 2 ժամ

աստղաբաշխական՝ ժամը 14:00- ից մինչև 16:00

***Ուսումնավարժության ավարտ:***

| Ժամկետը Օպ. | Աստղ | Մշակվող ուսումնական հարցեր | Ստեղծված իրավիճակը | Ռհսուցանողների գործողությունները | Ռհսումնավարժութ-յան ղեկավարի գործողությունները | Միջնորդների գործողություն-ները |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 |
| **I փուլ** – Բնակչության տարահանման և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը խոշոր անտառային հրդեհների դեպքում | | | | | | |
| Ժ+00 Ժ-ից Ժ+30 ր | ժամ 9:00 -ից ժամ 9:30 | Գորիս համայնքի ղեկավար կազմի ազդարարում, հավաք և խնդրադրում | Շոգ եղանակի և երաշտի պատճառով հրդեհ է բռնկվել Սյունիքի մարզի Գորիս համայնքի Որոտան գյուղի անտառային գոտիներում, որը ուժեղ քամու հետևանքով տարածվում է և հասնում խոշոր մասշտաբների: | Գորիս համայնքի շտաբի պետը համայնքապետից ստանալով տեղեկատվությունը անտառային հրդեհի մասին, իրականացնում է համայնքապետարանի ղեկավար կազմի ազդարարում : Սյունիքի ՄՓՎ ՃԿԿ-ն հրդեհի մասին ահազանգում է Գորիսի անտառտնտեսություն: Ուսումնավարժության մասնակիցները ստանալով | Ուսումնավարժության ղեկավարը շտաբի պետին տալիս է համայնքի ղեկավար կազմի հավաքի հրահանգ: Հավաքի ընթացքում ծանոթացնում է իրավիճակին: | Վերահսկում են հավաքի ազդանշանի ժամանակին հավաքի վայր ներկայանալու սահմանված ժամկետները: Ուշադրություն են դարձնում ազդարարման |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | Ստեղծված իրավիճակի վերլուծությունը բերում է նրան, որ գյուղատնտեսական մշակաբույսերին, անտառներին, վայրի կենդանիներին, ինչպես նաև համայնքին սպառնում է մեծ վտանգ, եթե ժամանակին չձեռնարկվեն համապատասխան միջոցներ: | հավաքի ազդանշան, ներկայանում են Որոտան գյուղ և մասնակցում խորհրդակցությանը: Շտաբի պետը հետևում է հավաքի ընթացքին: Համայնքապետին զեկուցում է խորհրդակցությանը պատրաստ լինելու մասին: Հրդեհաշիջման աշխատանքների դժվարությունը պայմանավորված է նաև տեղանքի բարդ և լեռնային ռելիեֆով, ինչպես նաև ճանապարհների բացակայությամբ: | | կազմակերպման և սահմանված ժամկետում իրականացման վրա, ստուգում է ազդարարման սխեմաները: Օգնում են մասնակիցներին խնդիրների յուրացման ու պարզաբանման հարցերում: |
| Ժ+30 ր-ից Ժ+45 ր | ժամ 9:30-ից ժամ 9:45 | Խորհրդակցություն համայնքապետարանում, իրավիճակի ներկայացում և խնդրադրում : | Այրվում է Որոտան գյուղի անտառային գոտին՝ մոտ 5 հա տարածք: Հայտնել ենք 911 ծառայությանը, անտառտնտեսությանը և Որոտան գյուղի բնակչությանը: | Խորհրդակցությունում ներկայացվում է ստեղծված իրավիճակը: Գորիսի ՀՓՋ-ի օպերատիվ խումբը և անտառատնտեսության աշխատակիցների հետախուզական խումբը միասին կազմակերպում են անտառի հետախուզություն, որոշելու համար հրդեհի տարածման հավանական ուղղությունը և մասշտաբները: Վայոց Ձորից ժամանած 5 հոգուց բաղկացած արշավախումբը, որը վրանային հանգիստ է կազմակերպել Որոտան գյուղի անտառային գոտում, հայտնվել է հրդեհի | Հանձնարարում է հետախուզական խմբին և անտառտնտեսության աշխատակիցների հետ միասին կատարել հետախուզություն: Հրդեհը ուժեղ քամու հետևանքով տարածվում է և հասնում խոշոր մասշտաբների: Կազմավորումները լինեն պատրաստ հրշեջ-փրկարարների հետ միասին հրդեհի տարածումը կանխելու և այն մարելու համար: | Հետևում են գործողություն-ների ընթացքին |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | օղակի մեջ և չի կարող ինքնուրույն դուրս գալ շրջափակումից: Առատ ծխապատ գոտու հետևանքով բավականին դժվարացել է որոնողափրկարարական աշխատանքները: Ժամանելով հրդեհի վայր Գորիսի ՀՓՋ-ի հրշեջները որոշում են մեքենայի տեղադրման դիրքը և աղբյուրների առկայության դեպքում դրանց գտնվելու վայրը: Համայնքապետարանը հրդեհաշիջման աշխատանքներին օժանդակելու նպատակով հատկացնում է երկու ջրատար, որոնք պետք է ապահովեն հրշեջ մեքենաներին և անձնակազմին խմելու ջրով : Ինչպես նաև որոշում են հրշեջներին օգնելու նպատակով կազմավորումների անձնակազմերը կենտրոնացնել հրդեհի առավել վտանգավոր տեղամասերում : | Որոշում են, Գորիս համայնքի Որոտան գյուղի բնակչությանը նույնպես ընդգրկել այդ աշխատանքներին: | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ժ+45 ր-ից Ժ+135 ր | ժամ 09:45-ից ժամ 12:00 | 2. Հետախուզության կազմակերպում | Ուժեղ քամու հետևանքով հրդեհը տարածվում է և հասնում գյուղի տներին: Հետախուզական խումբը հայտնում է, որ հրդեհի գոտում գտնվում են Որոտան գյուղի 6 բնակիչ և նրանց անհրաժեշտ է առաջին օգնություն: Առավել ծանր է երկուսի վիճակը, որոնք ստացել են երկրորդ և երրորդ կարգի այրվածքներ, որոնք փորձել են ինքնուրույն կանխել հրդեհի տարածումը և գտնվում են շոկային վիճակում: Նաև 10 խոշոր և 7 մանր անասուններ գտնվում են կրակի շրջափակման մեջ են: | Համայնքապետարանի հետախուզական կազմավորումը, Գորիսի ՀՓՋ-ի մեկ մարտական հաշվարկ, անտառնտեսության աշխատակիցները կատարում են տարածքի հետախուզություն, պարզում հրդեհի առավել ակտիվ օջախները և ուղղությունը, դրանց մոտեցման երթուղիները : | Վերահսկում է հրդեհաշիջման հետախուզական աշխատանքերը, տալիս է հրահանգներ ու ընդունում որոշումներ: Միաժամանակ բնակչության հետ իրականացվում են բացատրական աշխատանքներ՝ հետագայում անտառային հրդեհների կանխարգելման նպատակով : | Ուշադրություն են դարձնում անվտանգութ-յան կանոնների պահպանմանը: Մասնակիցնե-րին հանձնում են միջանկյալներ: Հետևում են աշխատանքնե-րի ընթացքին: |
| Ժ+135 - ից Ժ+195 ր | ժամ 12:00 13:00 | **I փուլում** Կատարված աշխատանքների ամփոփում: | | Մասնակիցները ներկայանում են խորհրդակցության և զեկուցում I փուլում կատարված աշխատանքների մասին: | Կազմակերպում է ամփոփում: Ունկնդրում և քննարկում է զեկույցները I փուլում կատարած | Միջնորդները ներկայանում են խորհրը դակցությանը, մասնակցում հարցերի |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | աշխատանքների մասին և տալիս գնահատական: | քննարկմանը: |
| **II փուլ** - Բնակչության տարահանման, պաշտպանության և անտառային հրդեհների հետևանքների վերացման միջոցառումների իրականացում: | | | | | | |
| Ժ+255 ր ից Ժ+315 ր | ժամ 14:00 -ից ժամ 15:00 | Անտառային հրդեհների հետևանքների վերացման միջոցառումների իրականացում: | Հրդեհը մեծ վնաս է հասցրել Գորիս համայնքի Որոտան գյուղի հարակից անտառին, գյուղատնտեսական մշակաբույսերին ու պտղատու ծառերին: Վնասվել են նաև էլեկտրահաղորդման և կապի գծերը: | Շտաբի պետը հետախուզության տվյալները հիմք ընդունելով , ներկայացնում է զեկույց համայնքապետին՝ անհրաժեշտ աշխատանքների կատարման վերաբերյալ: Սյունիքի ՄՓՎ Գորիսի ՀՓՋ-ն որոշում են հանդիպակաց կրակի կիրառման մեթոդով կասեցնել կրակի առաջխաղացումը, կազմակերպել հրդեհաշիջումը, արշավախմբին շրջանցիկ ճանապարհով դուրս բերել ծխապատ գոտուց , տուժածներին ցուցաբերել առաջին օգնություն և հանձնել բժշկական կենտրոնին: Գորիս համայնքի Որոտան գյուղի բնակիչների և կամավոր հրշեջ ջոկատի կազմի հետ համագործակցելով իրականացնում են հրդեհաշիջման աշխատանքներ: Իսկ շրջափակման մեջ գտնվող անասուններին տարահանում են անվտանգ տարածք: | Քննարկում է զեկույցները, ընդունում որոշումներ: Դիմում է մարզի համապատասխան մարմիններին վնասների վերականգնման խնդրանքով: | Միջնորդները մասնակիցնե րին հանձնում են միջանկյալներ: Միջնորդները հետևում են մասնակիցների գործողություն ներին: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Ժ+315 ր-ից Ժ+375 ր | ժամ 15:00 16:00 | **II փուլում** կատարված աշխատանքների ամփոփում: | | Զեկուցում են II փուլում կատարած աշխատանքների և այդ ընթացքում ծագած բարդությունների մասին: | Ունկնդրում է մասնակիցներին, քննարկում զեկույցները և տալիս գնահատական: | Մասնակիցնե-րին ցուցաբերում են օգնություն զեկույցների մշակման աշխատանքնե-րում: |
| Ժ+375 ր | ժամ 16.00 | Ուսումնավար-ժության ավարտ | | Մասնակիցները մասնակցում են ՇՈՒ-ի ամփոփմանը: | Ուսումնավարժության ղեկավարը անց է կացնում ուսումնավարժության արդյունքների ամփոփում: | Մասնակցում են ՇՈւ-ի ամփոփմանը: |

Ղեկավարման շտաբի պետ՝ Ռադիկ Բակունց

# ՄՏԱՀՂԱՑՈՒՄ

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնք Որոտան գյուղում շտաբային ուսումնավարժության

**Ուսումնավարժության թեման՝**

« Բնակչության տարահանման և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը խոշոր անտառային հրդեհների դեպքում »:

**Ուսումնավարժության նպատակները՝**

1. Ստուգել Գորիսի համայնքապետարանի և Որոտան գյուղի ղեկավար կազմի, կազմավորումների հրամանատարների ունակություններն անտառային հրդեհների կանխարգելման դեմ բնակչության հետ պրոֆիլակտիկական միջոցառումների կազմակերպման ժամանակ:

2.Կատարելագործել Գորիսի համայնքապետարանի և Որոտան գյուղի ղեկավար կազմի, կազմավորումների հրամանատարների ունակությունները անտառային հրդեհների կանխարգելման դեմ բնակչության հետ պրոֆիլակտիկական միջոցառումների իրականացման աշխատանքներում:

**Ուսումնավարժությունում ընդգրկվում են՝**

ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի համայնքապետարանի և Որոտան գյուղի ղեկավար կազմը, համայնքային ծառայությունների պետերը և կազմավորումների հրամանատարները:

**Ուսումնավարժության անցկացման ժամկետը՝**

2021թ մարտի 25-ին /1օր/ .

**Ուսումնավարժության անցկացման վայրը՝**

Գորիս համայնքի Որոտան գյուղ:

**Ելակետային տվյալներ**

Որոտան բնակավայրը գտնվում է սահմանամերձ գոտում: Տարածքը կազմում է՝ 326.4 հա: Բարձրությունը ծովի մակերևույթից՝ 900 մետր, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 50կմ, մայրաքաղաքից՝ 250կմ: Բնակելի տների թիվը՝ 18, որից՝ 12 առանձնատուն, 6 բազմաբնակարան շենք /76 բնակարան/: Բնակչության թիվը՝ 287 մարդ, որից 131՝ արական, 156՝ իգական սեռի, աշխատանք փնտրող քաղաքացիների և գրանցված գործազուրկների թիվը՝ 10 /կին՝ 3/:

**Ստեղծված իրավիճակը**

Անձրևազուրկ և շոգ եղանակի, երաշտի, բնակչության կողմից հակահրդեհային կանոնների խախտման և հրդեհի հետ անզգույշ վարվելակերպի պատճառով հրդեհ է բռնկվել Սյունիքի մարզի Գորիս համայնքի Որոտան գյուղի անտառային գոտիներում, որը ուժեղ քամու հետևանքով տարածվում է և հասնում խոշոր մասշտաբների: Ստեղծված իրավիճակի վերլուծությունը բերում է նրան, որ գյուղատնտեսական մշակաբույսերին, ցանքատարածքներին, անտառներին, վայրի կենդանիներին սպառնում է մեծ վտանգ: Հրդեհի շարունակական բնույթի դեպքում այն կարող է հասնել բնակելի տներին , հասցվի խոշոր նյութական վնաս , վտանգ ներկայացնելով համայնքի բնակչությանը, ինչպես նաև հավանական է թունավորումը ածխաթթու գազից :

**Ուսումնավարժության անցկացման կարգը՝**

Ուսումնավարժությունը անց է կացվելու 2 փուլով (1օր) ընդհանուր տևողությամբ:

**I փուլ՝** Բնակչության տարահանման և հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը խոշոր անտառային հրդեհների դեպքում:

1. **հարց** - Գորիս համայնքի ղեկավար կազմի ազդարարում, հավաք և խնդրադրում .
2. **հարց** - Խորհրդակցություն Որոտան գյուղում, իրավիճակի ներկայացում և խնդրադրում :
3. **հարց** - Հետախուզության կազմակերպում :

Գորիս համայնքի Որոտան գյուղի հարակից անտառային գոտում բռնկված հրդեհը, ուժեղ քամու պատճառով արագ տարածվում է /տարածման արագությունը 5.9կմ/ժ/ գյուղի տների ուղղությամբ: Ծագում են ծխի ընդարձակ գոտիներ, կտրուկ նվազում է տեսանելիությունը, համայնքի բնակչությունը կարող է ունենալ առողջության հետ կապված խնդիրներ, ինչպես նաև հավանական է թունավորումը ածխաթթու գազից: Համայնքապետարանը հրդեհաշիջման աշխատանքներին օժանդակելու նպատակով հատկացնում է երկու ջրատար, որոնք պետք է ապահովեն հրշեջ մեքենաներին և անձնակազմին խմելու ջրով : Ինչպես նաև որոշում են հրշեջներին օգնելու նպատակով կազմավորումների անձնակազմերը կենտրոնացնել հրդեհի առավել վտանգավոր տեղամասերում: Միաժամանակ ԱԻՆ Սյունիքի ՄՓՎ-ը և համայնքի կազմավորումների հրամանատարների կողմից իրականացվում են բացատրական աշխատանքեր, բնակչության հետ հետագայում նմանատիպ հրդեհների կանխարգելման համար:

փուլի տևողությունը օպերատիվ՝ 4 ժամ
աստղաբաշխական՝ ժամը 9:00- ից մինչև 13:00

**II փուլ՝** Բնակչության տարահանման, պաշտպանության և անտառային հրդեհների հետևանքների վերացման միջոցառումների իրականացում:

Համայնքապետարանը որոշում է վտանգավոր հրդեհի և ծխապատ գոտիներից տարահանել Որոտան գյուղի բնակչությանը, հրդեհաշիջման աշխատանքներին ներգրավել Որոտան գյուղի բնակչությանը: Հրդեհաշիջման աշխատանքերը իրականացնել միայն Սյունիքի ՄՓՎ ծավալած օպերատիվ շտաբի գիտությամբ և հսկողությամբ, գործել համախմբված և կազմակերպված : ՀՓՋ-ի

փուլի տևողությունը օպերատիվ՝ 2 ժամ
աստղաբաշխական՝ ժամը 14:00- ից մինչև 16:00

**1 հարց** – Բնակչության տարահանման կազմակերպում :
**2 հարց** - Անտառային հրդեհների հետևանքների վերացման միջոցառումների իրականացում:

**Ուսումնավարժության ավարտ՝ 16:00 :**

**ՈՒսումնավարժության արդյունքների ամփոփում:**

Շտաբային ուսումնավարժության արդյունքների ամփոփումը կանցկացվի 25.03.2021թ. Որոտան գյուղի վարչական ղեկավարի նստավայրում՝ ուսումնավարժությունում ընդգրկված մարմինների ղեկավարների մասնակցությամբ:

**Ղեկավարման շտաբի պետ** **Ռադիկ Բակունց**

«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
Ուսումնավարժության ղեկավար
Գորիս համայնքի ղեկավարի

________ Առուշ Առուշանյան
« 04 » մարտի 2021թ.

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում շտաբային ուսումնավարժության նախապատրաստման

| Հ/Հ | Միջոցառումների անվանումը | Կատարման ժամկետը | Պատասխան կատարողներ | Նշումներ կատարման մասին |
|---|---|---|---|---|
| 1. | 2. | 3. | 4. | 5. |
| **1. Կազմակերպական միջոցառումներ** | | | | |
| 1. | Ուսումնավարժության ելակետային տվյալների որոշում (թեման, հիմնական ուսումնական նպատակը, հարցերն ու դրանց մշակումն ըստ փուլերի ու ժամանակի, ուսումնավարժության անցկացման տեղն ու ժամանակը, ղեկավար կազմը, մասնակիցների ընդգրկումը) | մինչև | Համայնքի ղեկավար<br><br>Ղեկավարման շտաբի պետ | |
| **2. Ուսումնավարժության ծրագրավորում** | | | | |
| 1. | Ուսումնավարժության մտահղացման մշակում | մինչև | Ղեկավարման շտաբի պետ | |
| 2. | Ուսումնավարժության անցկացման պլանի մշակում | մինչև | Ղեկավարման շտաբի պետ | |
| **3. Համայնքի ղեկավար կազմի նախապատրաստում** | | | | |
| 1. | ՇՈՒ առնչվող ուսումնական ձեռնարկների ուսումնասիրում | մինչև | Ղեկավարման շտաբի պետ<br><br>Մասնակից անձնակազմ | |
| **4. Ուսումնավարժության նախապատրաստման ընթացքի վերահսկում** | | | | |
| 1. | Ուսումնավարժության ղեկավարին նախապատրաստական աշխատանքների ավարտման մասին գրավոր զեկույցի ներկայացում | մինչև | Ղեկավարման շտաբի պետ | |

Ղեկավարման շտաբի պետ՝ Ռադիկ Բակունց